ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Տնօրեն՝ Արման Սարգսյան

«02» սեպտեմբեր 2022 թ.

# ԵՊՀ առընթեր Ա. Շահինյանի անվան Ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոց

## 12Ե դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

## Հարությունովա Մարիա Սերգեյի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022-2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** (դասարանի ընդհանուր բնութագիրը)

12Ե դասարանում սովորում է 26 աշակերտ, որոնցից աղջիկ՝ 8, տղա՝ 18: Այս դասարանը ընդունվել է Ֆիզմաթ դպրոց 2020 թվականին և այդ օրվանից աշակերտները մեկ ընտանիքի նման մեկը մյուսին աջակցելով գրանցում են ուսումնական հաջողություններ:

*2.* **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում**
Ուս. տարվա ընթացքում դասղեկի կողմից նախատեսվում են իրականացնել հատուկ դասեր և վարժանքներ՝ աշակերտների կարգապահական, գեղագիտական և ռազմահայրենասիրական դաստիարակության համար: Այդ հանդիպումների նպատակն է ձևավորել երեխաների միջև դրական հարաբերություններ:
Դասղեկը պլանավորում է մասնակցել դասալսումներին տարբեր առարկաներից, կազմակերպել էքսկուրսիաներ, այցելություն թատրոններ և թանգարաններ:

3. **Հայեցի դաստիարակություն**
***3.1*** **Հոգևոր դաստիարակություն** –
Որպեսզի դասարանում լինի առողջ մթնոլորդ, ստեղծվի կայուն և միասնական կոլեկտիվ կարևոր է աշակերտի մեջ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ, կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի նրանց հոգևոր ձևավորմանը: Տարվա ընթացում նախատեսվում է այց Էջմիածնի գանձարան-թանգարան, որտեղ պահվում են բազմաթիվ սուրբ մասունքներ և իրեր: Այս էքսկուրսիան կներառի նաև այց Էջմիածնի շրջանի եկեղեցիներ և Զվարթնոց տաճար:

**3.2 Գեղագիտական դաստիարակություն** – Ինչպես և նախորդ տարիներին, այս տարի ևս նախատեսվում է այցելել Երևանի թատրոններ և համերգասրահներ՝ աշակերտներին ծանոթացնելու դասական և ժամանակակից ստեղծագործությունների հետ:

**3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն** - Տարվա ընթացում կայցելենք Երևանի Կոմիտասի անվան պանթեոնի հարևանությամբ գտնվող Զորավար Անդրանիկի թանգարան ինչպես նաև Արարատի մարզի Արարատ գյուղում գտնվող Սպարապետ

Վազգեն Սարգսյանի տուն-թանգարան։ Այցելություն Սարդարապատի, Բաշ-Ապարանի հուահամալիրներ։

**3.4 Ֆիզիկական դաստիարակություն**
Ֆիզմաթ դպրոցում ֆիզկուլտուրայի ուսուցիչները զարգագացնում են սեր սպորտի տարբեր ձևերի միջև, որը ապահովում է անհատի ֆիզիկական նորմալ զարգացումը։

**3.5 Աշխատանքային դաստիարակություն** - Դպրոցը ուս. տարվա ընթացքում կազմակերպում է Շաբաթօրյակներ։
12Ե դասարանը անպայման կմասնակցի այդ միջացառումներին՝ աշակերտների խմբային ոգին և աշխատասիրությունը խթանելու նպատակով։

**3.6 Բնապահպանական դաստիարակություն** - «Դասղեկի ժամ»-երի ընթացում կլինեն քննարկումներ պոլիէթիլենային տոպրակների և շշերի օգտագործման վնասների մասին։

**4. Դպրոց- ընտանիք կապը** – Դասղեկը մշտապես կապի մեջ է աշակերտների ծնողներ հետ և որևէ խնդրի (թե ուսումնական և թե ընտանեկան) համագործակվում է աշակերտի ծնողի հետ՝ աշակերտին օգնելու և հոգեբանական խնդիրներից խուսափելու համար։

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | կատարման ժամկետ | Կատարողներ |
|---|---|---|---|
| I | «Բարի գալուստ դպրոց» քննարկում, այս տարին դասարանի վերջին տարին է հարազատ դպրոցում: | | աշակերտ դասղեկ |
| II | STARMUS VI փառատոնի հետ կապված դասարանի աշակերտների կամավորական մասնակցություն: | | աշակերտ դասղեկ |
| III | Հանդիպում բանախոս Ջորջ Նիլդին և հետագա քննարկումը դասարանում: | | աշակերտ դասղեկ |
| IV | Զրույց դպրոց հաճախելու, կարգապահության, աշակերտի իրավունքների և պարտականությունների մասին: | | աշակերտ դասղեկ |
| V | ՀՀ անկախության տոնը՝ « Իմ հայրենիքը իմ սերն է» խորագրով: | | Աշակերտ դասղեկ |
| VI | Ավարտական և միասնական քննությունների հարցերի քննարկում: | | աշակերտ դասղեկ |
| VII | «Ուսուցչի տոն» խորագրով քննարկում: | | աշակերտ դասղեկ |
| VIII | Այցելություն Բյուրականի աստղադիտարան, բաց դաս: | | աշակերտ դասղեկ |
| IX | Աշակերտների հետ քննարկում՝ դպրոցում իրենց իրավունքները և պարտականությունները վերաբերյալ: | | աշակերտ դասղեկ |
| X | Զրույց՝ «Աշակերտի և ուսուցչի փոխհարաբերությունները» թեմայիով: | | աշակերտ դասղեկ |
| XI | «Ինչո՞վ կարող եմ քեզ օգտակար լինել» քննարկում, որի նպատակն է աշակերտների միջև սերմանել միմյանց օգնելու պատրաստակամություն: | | աշակերտ դասղեկ |
| XII | Զրույց՝ «Ինչպե՞ս լինել լավ ընկեր» թեմայով: | | աշակերտ դասղեկ |
| XIII | «Ինչպե՞ս նախաապատրաստվել առարկայական քննություններին» քննարկում: | | աշակերտ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| XIV | Նախատոնական զրույց՝ «Ինչպե՞ս դիմավորենք Ամանորը» թեմայով: | | աշակերտ դասղեկ |
| XV | «Ինչպե՞ս եմ պատկերացնում իմ դպրոցն մի քանի տարի ավարտելուց հետո» քննարկում, որի ընթացքում աշակերտները կքննարկեն թե ինչ կուզենան տեսնել փոխված դպրոցում տարիներ հետո: | | աշակերտ դասղեկ |
| XVI | «Ինչպիսի՞ երազանքներ ունենք և ինչպե՞ս կիրականացնենք դրանք» խորագրով քննարկում: | | աշակերտ դասղեկ |
| XVII | Զրույց՝ «Գեղեցկության և բարոյականության վերեբերյալ»: | | աշակերտ դասղեկ |
| XVIII | Հայոց բանակի օրվան նախորդող թեմատիկ զրույց: | | աշակերտ դասղեկ |
| XIX | Քննարկում՝ «Ու՞ր եմ ես գնալու սովորելու» | | աշակերտ դասղեկ |
| XX | Նախատոնական զրույց՝ «Մայրության և գողոցկության տոն»: | | աշակերտ դասղեկ |
| XXI | «Ինչպե՞ս պայքարել անտարբերության դեմ» քննարկում, որի ընթացքում աշակերտների մեջ կսերմանվի միմյանց նկատմամբ անտարբեր չլինելու կարևորագույն հատկանիշները: | | աշակերտ դասղեկ |
| XXII | Զրույց Լավ և վատ սովորությունների մասին: | | աշակերտ դասղեկ |
| XXIII | «Հայոց Մեծն եղեռն» թեմայով քննարկում, որից հետո նախատեսվում է այցելություն Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և Հայոց Ցեղասպանության թանգարան: | | աշակերտ դասղեկ |
| XXIV | «Ի՞նչ է ահաբեկչությունը և ինչպե՞ս պայքարել դրա դեմ» թեմայով զրույց: | | աշակերտ դասղեկ |
| XXV | Զրույց՝ «Սերն իմ տանը» խորագրով, որի ընթացում աշակերտները կներկայացնեն իրենց պատկերացումները սիրո, բարու և համերշախության մասին: | | աշակերտ դասղեկ |
| XXVI | «Գնահատենք մեր ժամանակը» թեմայով քննարկում: | | աշակերտ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | դասղեկ |
| XXVII | Զրույց՝ «Ինչպե՞ս ազատվել վատ սովորություններից»: | | աշակերտ դասղեկ |
| XXVIII | «Համակարգիչն իմ ընկերն է, թե թշնամին» թեմայով քրրակում, որի ընթացքում աշակերտները կբաժանվեն խմբեր և կքննարկեն համակարգչի օգտագործման դրական և բացասական կողմերը: | | աշակերտ դասղեկ |
| XXIX | Զրույց՝ «Մարդ, որին ես կուզենայի նմանվել» թեմայով: Աշակերտների կտրվի 15-ական րոպե ներկայացնելու համար իրենց կողմից ընտրված մարդուն և թե ինչու են ցանկանում նմանվել իրեն: | | աշակերտ դասղեկ |
| XXX | «Ինչպե՞ս հասնել հաջողության» թեմայով քննարկում: | | աշակերտ դասղեկ |
| XXXI | Նախատոնական զրույց՝ «Հայաստանի Առաջին հանրապետություն» թեմայով, այցելություն Սարդարապատի հուշահամալիր: | | աշակերտ դասղեկ |
| XXXII | Տարեվերջյան զրույց «Դպրոցական օրերի ուրախությունները և դժվարությունները» թեմայով: | | աշակերտ դասղեկ |
| XXXIII | Վերջին դասի կազմակերպում: | | աշակերտ դասղեկ |
| XXXIV | Վերջին զանգի կազմակերպում: | | աշակերտ դասղեկ |

# ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

| Անցկացման օրը | Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը | ծանոթություն |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |